600.0292.18.08.23

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

18 օգոստոսի 2023 թվականի №292-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2002 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 1-Ի №79Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասը, 33-րդ և 34-րդ հոդվածները՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը **որոշում է.**

1. Հայաստանի Հանրապետության էներգետիկայի կարգավորող հանձնաժողովի 2002 թվականի նոյեմբերի 1-ի «Հայաստանի Հանրապետության էներգետիկայի կարգավորող հանձնաժողովի 2002 թվականի օգոստոսի 30-ի №56Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու և «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերության էլեկտրական էներգիայի (հզորության) բաշխման №0092 լիցենզիայի պայմանները հաստատելու մասին» №79Ա որոշման 2-րդ կետով հաստատված «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերության էլեկտրական էներգիայի (հզորության) բաշխման №0092 լիցենզիայի պայմանների №1 հավելվածի՝

1) 7-րդ կետի՝

ա. 1-ին ենթակետը լրացնել հետևյալ բովանդակությամբ «գ» պարբերությամբ.

«գ. յուրաքանչյուր տարվա վերանայման ժամանակ փոփոխվում է հետևյալ բանաձևով որոշված մեծության չափով.

$$\Delta Շ_{ՄՇ} = \left(\sum_{j=1}^{k} \left(ՆՄ_{Փj} - ՄՎ_{Փj} \right) - ՆՄ_{Բ} * k * \left(1 - \frac{ՏԿՄ_{Բ}}{100\%} \right) \right) * \frac{ՇՆ_{Հ} + ՄՆ_{Հ}}{100\%},$$

որտեղ՝

$ΔՇ_{ՄՇ}$-ն նոր սպառողների կամ սպառողների վերակառուցվող սպառման համակարգերը էլեկտրական ցանցին միացմանն ուղղված ներդրումային ծախսի փոփոխությամբ պայմանավորված սույն կետում նշված հիմնական միջոցների մաշվածության (ոչ

նյութական ակտիվների ամորտիզացիայի) և թույլատրելի շահույթի գումարային տարեկան մեծության առավելագույն շեմի հաշվարկային տարվա ճշգրտման մեծությունն է (դրամ),

k-ն 2016 թվականից սկսած մինչև հաշվարկային տարվան նախորդող տարին ներառյալ ժամանակահատվածի տարիների թիվն է,

ՆՄ$_{фj}$-ն j-րդ տարում նոր սպառողների կամ սպառողների վերակառուցվող սպառման համակարգերը էլեկտրական ցանցին միացմանն ուղղված փաստացի ներդրումային ծախսի Հանձնաժողովի կողմից ընդունված մեծությունն է (դրամ),

ՄՎ$_{ф}$-ն j-րդ տարում նոր սպառողների կամ սպառողների վերակառուցվող սպառման համակարգերը էլեկտրական ցանցին միացման դիմաց դիմող անձանցից փաստացի գանձված միացման վճարների մեծությունն է (դրամ),

ՆՄ$_{բ}$-ն նոր սպառողների կամ սպառողների վերակառուցվող սպառման համակարգերը էլեկտրական ցանցին միացմանն ուղղված ներդրումային ծախսի բազային մեծությունն է, որն ընդունվում է հավասար 3.5 միլիարդ դրամ,

ՏԿՄ$_{բ}$-ն նոր սպառողների կամ սպառողների վերակառուցվող սպառման համակարգերը էլեկտրական ցանցին միացման վճարների բազիսային տեսակարար կշիռն է միացմանն ուղղված ներդրումային ծախսի բազային մեծության մեջ, որն ընդունվում է 2016 թվականի ցուցանիշին հավասար,

ՇՆ$_{հ}$-ն հաշվարկային տարվա համար սույն մեթոդիկայի 13-րդ կետի համաձայն որոշված ակտիվների շահութաբերության նորման է մինչև հարկումը (տոկոս),

ՄՆ$_{հ}$-ն հաշվարկային տարվա համար սույն մեթոդիկայի 8-րդ կետի համաձայն որոշված հիմնական միջոցների (ոչ նյութական ակտիվների) մաշվածության նորման է (տոկոս).»,

բ. 2-րդ ենթակետում «վերանայված 2025 և 2028 թվականներին» բառերը փոխարինել «վերանայված սույն կետի 1-ին ենթակետում նշված չափերով» բառերով.

2) 15-րդ կետի բանաձևում «S» բաղադրիչը փոխարինել «$m * S$» բաղադրիչով, իսկ նախավերջին պարբերությունում «տոկոսադրույքն է, որն ընդունվում է հավասար 12 տոկոս» բառերը՝ «ամսական տոկոսադրույքն է, որն ընդունվում է հավասար 1 տոկոս» բառերով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերությանն օրենքով սահմանված կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ **Գ. ԲԱՂՐԱՄՅԱՆ**

ք. Երևան
18 օգոստոսի 2023թ.